

ԲՆԱՐԻԿ ԿՈՐԿՈՏՅԱՆ
ՆԻՆԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱԾԵՆՁԻ ԱՈԱԶԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Հայերեն Աստվածաշունչ տպագրելու հարցը վաղուց զբաղեցրել է հայ եկեղեցու ղեկավարությունը՝ ԺԶ դարից սկսած, կաթոլիկների օգնությամբ¹։

Հայերեն լեզվով Աստվածաշունչ տպագրելու հայերի բազմիցս դիմումները վերջապես հաշվի են առնվում Վատիկանի կողմից, 1637—1638 թթ. գումարվում են մի քանի նիստեր, որտեղ և որոշում են, հայերեն լեզվով Աստվածաշունչ տպագրելու համար, հայերեն Յոթանասնից թարգմանությունը համեմատել լատինական Վուգլատայի հետ և նոր հանձնել տպագրության։ Այս աշխատանքը կատարում է Հ. Պոզոս Փիրմալին։ Ապարդյուն ջանքեր, քանի որ Աստվածաշունչը խմբագրվելուց հետո էլ չի հանձնվում տպագրության։

Խաչատուր Նորջուղայեցին իր «Պատմութիւն պարսից» ուսումնասիրության մեջ² նույնպես նշում է, որ Նոր Զուղայի նորաստեղծ Ամենափրկիչ վանքի տպարանում «սկսան տպել Աստուածաշունչ գիրն, այլ վասն մեղաց մերոց մնաց թերակատար»։ Տպագրությունը պետք է սկսված լիներ Նոր Զուղայի տպարանի գործունեության վերջին տարիներին, քանի որ Խաչատուր Նորջուղայեցին նշում է նաև, որ «Սա (Աստվածա-

շունչը) կարի լաւագոյն ունելով զթուղթն եւ զգիրն, քան զառաջին տպեալ գրեանսն»։ Թեոդիկը այս «թերի» Աստվածաշնչի տպագրության թվական է ընդունել 1650-ը։ Ցավոք Նոր Զուղայի այս տպագրությունից մեղ չի հասել և ոչ մի էջ։

Վերջապես, հայերեն լեզվով Աստվածաշունչ տպագրվում է 1666 թվականին Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում՝ հայ տպագրության երախտավորներ Մատթեոս սարկավազ Ծարեցու, Ավետիս Ղլիճեցիի և բազմերախտ Ոսկան վարդապետ Երեանցու ջանքերով՝ Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսի հանձնարարությամբ։

1662 թվականի սեպտեմբերի 27-ին Ոսկանը Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի թուղթովությամբ մեկնում է Եվրոպա՝ Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի աշխատանքները ղեկավարելու համար։ Ծանապարհին, հույս ունենալով իրականացնելու Աստվածաշնչի տպագրությունը քրիստոնյա երկրում, Ոսկանը մտնում է Լիվոռնո և ապա Հռոմ։ Սակայն «Անդ ևս ոչ եղև ինչ մի խթարութիւն օգնութեան գործոյս,— գրում է Ոսկանը.— վասն յոքունց պատճառաց ներհակականց. թէ ի մերայնոց ազանց. և թէ կանօնաց և սահմանաց»³։

Վերադառնալով նորից Լիվոռնո, Ոսկանը գտնում է երեք հարուստ ջուղայեցիների՝

¹ Հ. Գ. Գալեմսթրյան՝ Հայ աստուածաշունչի տպագրութեան ջանքեր Ոսկանէն յառաջ, «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 10։

² «Ազգարար», 1795, էջ 233։

³ Աստուածաշունչ, Ամստերդամ, 1666, հիշատակարան։

Ստեփանոսին, Պետրոսին և Թեոդորոսին, որոնք խոստանում են օգնել Ոսկանին Աստվածաշունչ տպագրելու գործում: 1665 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրերի մեջ ասված է. «... Վերոգրեցեալ պարոն Ստեփանոսն և պարոն Պետրոսն խոստացան զաւելեալ շահսն որ ի վաճառման է Աստուածաշնչոյն լինիցի տալ սուրբ էջմիածնի, նոյնպէս և պարոն Թեոդորոսն զիւր բաժին շահոյ զկէսն խոստացաւ սուրբ Երուսաղէմի. և զկէսն յուշոյ վանից սրբոյն Սարգսի զօրաւարին»: Ստանալով շուղայեցիներին նյութական օգնությունը, Ոսկան Երևանցին գալիս է Ամատերգամ և, օգտագործելով տպարանում եղած բոլոր տառերը, սկսում է Աստվածաշնչի տպագրությունը 1666 թվականի մարտի 11-ին: Ոսկան Երևանցին, հավանաբար Քրիստոֆել Վան Դեյկին է պատվիրում նոտրդրեր, որը և օգտագործում է «ներվերջնում՝ շարակնոցին» Աստուածաշնչին»:

Ոսկանյան Աստվածաշունչը մի գեղեցիկ տպագրություն է: Այն բաղապագած է Ռիլ (628) և Պլի (834) երկսյուն էջերից, քառածալ է, շարվածքի մեծությունը՝ 21×14,7 սմ.: Բնագիրն ունի գեղեցիկ էջախորագրեր, վերջադրված ու լուսանցադարձեր: Գրքում տեղ են գտել 159 փայտափորագրի պատկերներ, որոնցից մեծ մասի վրա նշված է փորագրողի՝ Christoffel Van Sietem-ի՝ անվան սկզբնատառերը CVS: Բացի այս նկարչի գործերից, Ոսկան Երևանցին օգտագործել է նաև այլ նկարչի փայտափորագրի պատկերներ:

Ոսկանյան Աստվածաշունչը կազմված է ամուր փայտի տախտակներից, ծածկված հորթի շագանակագույն կաշվով: Կազմի թե՛ առաջին և թե՛ վերջին երեսները ամուր կնքված են և զարդարված արևելյան նկարներով: Հայտնի են Աստվածաշնչի ավելի ընտիր կազմեր, ինչպես, օրինակ, Փարիզի ազգային գրադարանում պահվող օրինակը, որը նշանավոր է նաև նրանով, որ այնտեղ տպագրված է Ոսկան Երևանցու նամակը Լուդովիկոս 14-րդին, որով նա թուլյություն է խնդրում Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանը Ֆրանսիա տեղափոխելու մասին: Աստվածաշնչի ինչպես մյուս, նաև այս օրինակը կազմել է այդ գծով ամստերդամյան հայտնի վարպետ Ալբերտ Մադնու-

սը: Գրքի անվանաթերթը շրջափակված է գեղեցիկ զարդով, առաջին բառը թռչնագիր է, որոնք օգտագործված են նաև գրքի բնագրում: Աստվածաշնչի անվանաթերթն է՝

Աստուածաշունչ Հնոց եւ նորոց Կտակաբանաց ներ պարունակող. Շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ. ճշմարտասիրաց Թարգմանչաց: Իսկ զկնի հրամանաւ վեհափառին Տեառն Յակօբայ Հայոց Կաթողիկոսի զխակարգեալ և տնտեսալ ըստ Դաղմատացոցն. նա և զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից ընդ իրեարս առնթեր կարգեալ ամենեցուն. նուաստի ումեմն բանի Տեառն սպասաւորի. Ոսկանի Երևանցոյ, Յամատերդամ: Ներ Տպարանում սրբոյն էջմիածնի. և սրբոյն Սարգսի զորավարի, ի թուում փրկչին. 1666, Իսկ Հայոց. ՈՃԺԾ. ամսեանն մարտի մետասանի:

Չնայած Ոսկան Երևանցին գրքի անվանաթերթին նշել է, որ Աստվածաշնչի տպագրությունը կատարել է ըստ «նախնեաց մերոց Թարգմանչաց» բնագրի, սակայն նա Աստվածաշնչի հին հայկական թարգմանությունը գլխատելուց ու տնտեսելուց բացի դաղմատերենի (լատինական) Աստվածաշնչի օրինակով, կատարել է այլ ճշտումներ նաև բնագրում: Այդ ճշտումների մասին Ոսկան Երևանցին նշել է գրքի առաջաբանում և «Առնթերցողսդ» գլխում, (էջ 831—833):

Նա գրում է, որ չնայած Դաղար Վալաքացու ձեռագիր Աստվածաշունչը, որը բերել էր իր հետ Հայաստանից, արդեն համաձայնեցված էր դաղմատացիների Աստվածաշունչին, բայց ինքը, հայոց կաթողիկոսի հրամանով դալով Ամատերդամ, նորից է ձեռնարկում այդ դժվարին աշխատանքին. «Ջգլխատեալսն ի նախնեաց՝ ես ևս տնտեսցի ըստ դաղմատացոյն,— գրում է նա,— զթիւսն, զհամաձայնութիւնսն առադրեցի միբստմիոջէ՝ որպէս էր հնար, քանզի ոչ ամենեկն և ամենայն իրօք միաբանեցան. այլ ի տեղիս յոլովս տարաձայնեցան զլիով՝ և տամբ՝ ոմանք յետ և յառաջ՝ ոմանք թերիք և աւելորդք. որոց յարմարումն ընդ իրեարս կարի դժուարաւ եղև, և բազմաւ ջանիւ: Որպէս է տեսանելի ի գիրս Մոսէսի, Յեսուայ, Սաղոմոնի, Դանիելի. և այլոց»:

Հայերեն Աստվածաշնչի և դաղմատերենի, այսինքն Վուլգատայի, միջև գոյություն ունեցող տարաձայնությունները Ոսկան Երև-

⁴ Մինչև այժմ նկարիչը հայտնի էր Կոռնելիուս Վան Սիգեմ անունով, այն ճշտվել է Յ. Քյուրդյանի կողմից «Ոսկանի Աստուածաշունչին փայտափորագրեալ պատկերները» հոդվածում. տե՛ս՝ «Սիոն», 1966, էջ 105—111:

⁵ Յ. Ն. Դուրիեզ, Հայերեն գրքերի տպագրությունը Ամատերդամում 17—18 դարերում.— «Տեղեկագիր», 1963, № 2, էջ 89—90:

⁶ Աստուածաշունչ, Ամատերդամ, 1666, «Առնթերցողսդ» գլխում:

վանցին բաժանել է խմբերի՝ «Որք են այսպիսիք տարադանութիւնք.— գրում է նա.— նախորդն դրութիւն գլխոց՝ և տանց։ Երկրորդն գոլն և ոչ գոլն գրոց, գլխոց՝ և տանց։ Թէ առ մեզ՝ և թէ առ նոսա։ Երրորդն, գլխոց և տանց առանելութիւնն և նուազութիւնն։ Չորրորդն, գլխոց և տանց յետ և յառաջ լինիլն։ Հինգերորդն. բանիցն այլատարադութիւնք, և շաղկապութիւնք։ Վեցերորդն վասն մերոյն ցանգոյ և նախադրութեան»։

Համեմատման աշխատանքները Ոսկանը չի կատարել հետևողականորեն։ Միշտ չէ, որ աշխատել է նմանվել միայն գաղմատական Աստվածաշնչին։ Օրինակ, երկրորդ կարգի ճշտումների մասին դրել է. «...բանզի առ նոսա գոն գիրք Յեսուայ Որգույ Սիրաբայ կատարելապէս ընկալեալ ըստ այլոց Աստուածաշնչոց գրոց՝ տնահամարով գլխով և համաձայնութեամբ փակեալ. զոր և ես ըստ իմում կարի թարգմանեալ յօրինեցի ըստ գաղմատացւոցն. բանզի մեզ ոչ գոյը լիապէս, այլ ծաղկաբաղ արարեալ։ Նաև Ստեփանոս վարդապետն պօղոնացի թարգմանեալ և առաքեալ ըստ մերոյ խնդրոյ. բայց ոչ ժամանեաց յօգնութիւն, այլ զկնի ամի միոյ. նաև զշորրորդ գիրս Եղրասայ՝ որ մեզ ոչ գոյ ներ մատենից Աստուածայնոց. այլ միայն ի գրյարկս սաղմոսավանից՝ զայն ևս ծաղկաբաղ արարեալ. նոյնպէս և զայն գիր ի հայս բարբառ արտալածեալ շարադրեցի. նաև ղցանգս Աստուածաշնչին։ Բայց այս շորրորդս Եղրոյ առ նոսա ևս երկբայս գուրով ոչ ունի զհամաձայնութիւնս, և ոչ ի տեղւոյ իւրում, այլ ի վերջոյ եղեալ ընդ Եղրասայ երրորդ՝ առ մեզ առաջին էր կարգեալ՝ ես ևս ըստ մերոյն առաջին կարգեցի, փոխարկելով զթիւ համաձայնութեանցն ներ ցանգոյն, և ի լուսանցսն։ Բայց կարի աշխատանք եղև Սական երրորդ գիր մակարայեցւոցն սակա առ նոսա ոչ գոլոյն ես ևս ըստ մերոյն որպէս էր եղեալ թարգմանութեան գլխոյ և համարոյ՝ երի...» և այլն։

Այսպիսով, այն, ինչ կար առավել հայկական և գաղմատական Աստվածաշնչերում, Ոսկան Երևանցին մտցրել է նաև տպագիր Աստվածաշնչի մեջ։

Չնայած Ոսկան Երևանցու Աստվածաշնչի ստույգ տպաբանակը դեռևս հայտնի չէ, սակայն մեր կարծիքով այն տպագրվել է բավական մեծ քանակով, որովհետև «Հայ հնատիպ գրքի մատենադատություն» կազմելու կապակցությամբ տարիներ շարունակ առիթ ենք ունեցել տեղեկություններ հավաքելու ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանյան երկրների խոշոր գրադարաններում և անհատ գրասերների մոտ պահվող հայերեն հնատիպ գրքերի մասին։ Այդ

տեղեկություններից պարզ երևում է, որ հնատիպ գրքերից ոչ մեկը այնքան շատ (օրինակներով) և տարածված չէ, որքան Ոսկանի Աստվածաշնչնը (չնայած նրա պատկանելի ծավալին)։

Ոսկանյան տպագիր Աստվածաշնչից տեսել ենք (ՃԵՎՍՍ) շուրջ 30 օրինակ, որոնց մեջ տարբերություններ չենք նկատել, բացի գրքի արտաքին ձևավորումից։

Պրպտումների ընթացքում, վերջերս, դուրս եկավ Զարեհ Պտուկյանից (ԱՄՆ) շնորհակալությամբ ստացանք ոսկանյան Աստվածաշնչի մի քանի լուսանկար, որոնց շնորհիվ պարզվեց, որ սույնի երկրորդ մասը՝ Նոր կտակարանը, 26 էջով պակաս է մեզ ծանոթ օրինակներից, այսինքն՝ ոչ թե 834 էջ է, այլ՝ 808 էջ։

Ի՞նչն էր այս հետաքրքիր տարբերության պատճառը, սխալ էջակալությունը, թե մի այլ բան։

Համեմատությունից պարզվեց, որ Զ. Պտուկյանի ուղարկած օրինակում բացակայում են «Աղօթք Մանասի արքայի Յուդայի» և «Գիրք Եղրասայ շորրորդ» գրքերը, որոնք մեր տեսած օրինակներում գտնվում են գրքի 719—744 էջերում։ Որոշ տարբերություն կա նաև գրքի հիշատակարանում։

Ի՞նչն էր ստիպել Ոսկան Երևանցուն Աստվածաշնչնը տպագրել երկու անգամ, ավելի ճիշտ՝ երկու տարբերակով։

Այս հարցի ամենաճիշտ և միակ պատասխանը կլինի տպաբանակի ավելացումը, այսինքն՝ մտածել, որ Ոսկանը Աստվածաշնչի որոշ քանակություն տպագրելուց հետո շարվածքը չի քանդել, որպեսզի անհրաժեշտության դեպքում նորից տպագրի։ Մի բան, որ

Օրինակ, Աստվածաշնչից մի քանի օրինակներ կան Հայաստանի Հանրապետական գրադարանում, Մաշտոցի անվան մատենադարանում, Գրականության ու արվեստի թանգարանում, Պատմության թանգարանում, Գիտությունների ակադեմիայի գրադարանում, և մի շարք այլ գրադարաններում ու անհատ անձանց մոտ։ Բավական օրինակներ կան նաև Մոսկվայի, Լենինգրադի, Քիբիլիսիի և Բաքվի խոշոր գրադարաններում։ Իսկ արտասահմանում՝ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մատենադարաններում, Փարիզի Ազգային գրադարանում, Լոնդոնի Բրիտանական թանգարանում, Լեյդենի և Ամստերդամի համալսարանների գրադարաններում, Երուսաղեմի ս. Հակոբյանց Կյուպենկյան մատենադարանում, Սկյուտարի ս. Խաչ եկեղեցում, Ռումինական Ակադեմիայի գրադարանում, Հարություն Հազարյանի (Նյու-Յորք), Մանուկ Բարեթյանի (Լոնդոն), Կարո Մինասյանի (Ն. Ջուզա), Զարեհ Պտուկյանի և մի շարք այլ գրադարաններում և անհատ անձանց մոտ։



Նկար 1

Աստվածաշնչի լրիվ օրինակի (առաջին տպագրության) 718—719 էջերը

նգակի երևույթ չէր, և ժամանակին կիրառվել է:

Սակայն այս մեկնաբանությունը հնարավոր լինելով հանդերձ, միակ հավանական չէ, քանի որ այն երկրորդ անգամ տպագրվել է ոչ լրիվ նույնությամբ, այսինքն՝ վերահիշյալ գրքերի բացակայությամբ և հիշատակարանի որոշ տարբերությամբ: Մի հանգամանք, որ տեղի է տալիս շատ ենթադրությունների և կարիք է զգում ճիշտ մեկնաբանման:

Մեր կարծիքով, Ոսկանը Աստվածաշնչի տարբերակում այդ փոփոխությունները մտցրել է՝ ելնելով դավանաբանական մտահոգություններից:

Հայտնի է, որ Հին և Նոր Կտակարաններում կան կանոնական և պարականոն գրքեր: Այդպիսիների թվին են պատկանում Եզրասի Ա և Դ և «Աղօթք Մանասէի» գրքերը: Եզրասի Ա գիրքը ընկած պարականոն է, բայց հին հայկական Աստվածաշնչի մեջ եղել է, իսկ վերջին երկու գրքերը՝ «Աղօթք Մանասէի» և «Գիրք Եզրասայ չորրորդ»-ը, հայկական Աստվածաշնչի մեջ չեն եղել⁸, դրանք Ոսկան երևանցի մտցրել է՝ թարգմանելով դադատականից, և դրել այն բաժ-

նում, որ բաժնում գտնվել է բնագրում (այսինքն՝ հավելվածում):


Այս ավելացումը Ոսկանը կատարել է Աստվածաշնչի առաջին տպագրության մեջ:

Այն առաջինն ենք համարում, քանի որ Աստվածաշնչի 718 էջում եղած «աղօթք» հիշագրվել մեր տեսած բոլոր օրինակներում համապատասխանում է 719 էջի «Աղօթք Մանասէի...» վերնագրին, իսկ 2. Պոտոկյանի մոտ եղած օրինակում 718 էջի «աղօթք» հիշագրվել առաջին տպագրության թվերիմացաբար մնացել է. սակայն նրա տարբերակում այլևս չի համապատասխանում 719 էջի նոր վերնագրին, որը հանված գլուխների պատճառով ոչ թե սկսվում է «աղօթք» բառով, այլ «Ջերօնիմոսի» բառով (տե՛ս՝ նկ. 1—2):

Հավանաբար Ոսկանը կամ մոռացել է «աղօթք» հիշագրվել փոխարինել նոր գլխին համապատասխանող «ջերօ» հիշագրով, կա՛մ էլ, առանձին նշանակություն չտալով դրան, չի ցանկացել մեկ բառի (կամ վանկի) համար մի ամբողջ էջ նորից տպագրել, որով և նպաստել է մեղ պարզելու, թե ղրանցից ո՞րն է սկզբնական տպագրությունը և ո՞րն է նրա տարբերակը:

Առաջին տպագրության ժամանակ Ոսկան երևանցին շատ լավ գիտակցել է, որ այս եր-

⁸ Ն. Նավական, Ոսկանյան Աստվածաշունչը Ս. գրոց կանոնի հայեցակետին», «Սիոն», 1966, № 2—3, էջ 70—71:



Նկար 2

Աստվածաշնչի տարբերակի 718—719 էջերը

կու գրքերը պարականոն են և ընդունելի չեն հայկական եկեղեցու կողմից⁹։

Նա այդ մասին նշել է նույնիսկ գրքի առաջաբանում, որ «Հոգևորդ գիրս նգրասայ, որ մեզ ոչ դոյ ներ մատենից Աստուածայնոց, այլ միայն դրարկս սաղմոսավանից, զայն ևս ծայրբաղ արարեալ, նոյնպէս և զայն գիր ի հայս բարբառ արտալածեալ շարադրեցի»։

Սակայն այս երկու գրքերը Աստվածաշնչի մեջ ընդհանրապես չգնել Ոսկան Երևանցին չէր կարող, որովհետև այն պետք է անցներ լատին գրաքննության ձեռքով։ Ժիշտ է, այն ժամանակ Հոլանդիան անկախ երկիր էր, սակայն կաթոլիկ հավատաքննությունն այնքան ուժեղ էր, որ իր իշխանությունը կարող էր տարածել նաև Հոլանդիայում ապրող քրիստոնյաների վրա։

Բացի այդ, Աստվածաշունչը պետք էր տարածել նաև Հոգմի տիրապետության սահմաններում։ մի բան, որը շատ կարևոր էր, և որի վաճառքը կարող էր արգելվել լատին

գրաքննության (կամ կաթոլիկ հավատաքննության) կողմից։

Այս մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ 1668 թվականի սեպտեմբերի 24-ի Հոգմի ս. ժողովի նիստում քննարկվել է Հոլանդիայի պապական նվիրակի զրպարտիչ նամակը, տպագրվող ոսկանյան Աստվածաշնչի «մոլորություններ» պարունակելու մասին, կամ թեկուզ այն, որ ոսկանյան Աստվածաշնչի մոտ 20 օրինակ, որոնք ուղարկված էին գրաքննության համար, մինչև 1671 թվականը պահվում էին նրանց մոտ¹⁰։

Լատին գրաքննիչների ավերիչ գործողությունների փայլուն ապացույց է նաև այն, որ Մարսելի կաթոլիկ եպիսկոպոսը Ոսկանից պահանջում է «հավատոյ զավանութեան» մի գրություն՝ հայերեն և լատիններեն լեզուներով գրված, որովհետև Ոսկանը նամակագրություն ուներ հայոց կաթողիկոսի հետ։

Կամ թեկուզ և այն, որ Ս. էշմիածնի և Ս. Սարգսի այնքան օգտակար տպարանը, չդի-

⁹ Ի դեպ նույն՝ 1668 թվականին Ոսկանի տպագրած «Սոր կտակարանում» նույնպես այդ գրքերը տեղ չեն գտել։

¹⁰ Հ. Գ. Գալեմիսյան, Հայ Աստուածաշունչի տպագրության ջանքեր Ոսկանին յառաջ, «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 15—16։

մանալով դավաճանների և կաթոլիկ գրաբռնիչների հալածանքներին, փակվեց:

Բացի դավաճանական հարցերից, որոնք սակայն Ոսկանին տպագրել Աստվածաշնչի երկու տարբերակ, մեր կարծիքով գոյություն ունի մի այլ կարևոր հանգամանք ևս, որը Ոսկանի ամենագնահատելի արժանիքներից մեկն է: Դա Ոսկան Երևանցու լավ բնագրագետ լինելու հանգամանքն է:

Ոսկանը ցանկացել է, անկախ Հոռմից, հավատարիմ մնալով ձեռագրերին, ստեղծել մի լրիվ բնագիր ունեցող տպագիր Աստվածաշունչ՝ հետագու սերունդներին թողնելու համար:

Տպագրված Աստվածաշնչի առաջին տարբերակը գրաքննության կողմից ընդունվելուց հետո, Ոսկան Երևանցին մտածում է իսկական՝ հայկական Աստվածաշունչ տպագրելու մասին, այսինքն՝ մի գիրք, որ զերծ լինի կաթոլիկ ներմուծություններից և բավարարի հայ եկեղեցու պահանջները:


Եվ Ոսկանը շփոխելով գրքի սկզբնամասը, այսինքն՝ Հին Կտակարանը ու նոր Կտակարանի սկիզբը, շարվածքից հանում է հավելվածի «Աղօթք Մանասէի» և «Գիրք Եզրասայ յորրորդ» պարականոն գրքերը, ղգուշութում փոխում է գրքի էջահամարները (թե՛ հայկական և թե՛ արաբական), նորից խմբագրում է հիշատակարանը և տպագրում ևս որոշ քանակի Աստվածաշունչ, որի ստույգ թիվը դեռևս հայտնի չէ:

Իսկ ի՞նչ է փոխված տարբերակի հիշատակարանում:

Աստվածաշնչի և նրա տարբերակի հիշատակարանն էր բովանդակութամբ լրիվ նույնն էն մնագել: Տարբերությունը խմբագրության, կամ ավելի ճիշտ՝ շարվածքի մեջ է: Որո՞նք են այդ տարբերությունները:

Մինչև այժմ մեր տեսած բոլոր օրինակներում հեղատակարանն ավարտվում է 834 էջում, իսկ դոկտոր Զ. Պտուկյանի մոտ պահվող օրինակում, հանված ուղեկներով հետևվանքով՝ 808 էջում (տե՛ս՝ նկ. 3—4):

Հեղատակարանի վերջին էջի ձախ սյունակի մեծագույն 7-րդ տողի «եռերտասաներորդ» բառեղ հետո ռոմած վեոսակետը, տարբերակում փոխարինվել է մեծակետով, և հաջորդ «եսե» բառը սկսվել է փոքրատառով: Այնուհետև ձախ սյունակի վերևից 17-րդ տողի «զպէսա» բառի կրճատ ձևը փոխարինվել է լուծվ ձևով, այսինքն՝ «զպէս պէս»-ով, որի հետևանքով էլ այդ և հաջորդ վեց տողերի տողատումը խախտվել է: Հաջորդ պարբերության «եղեցիք» բառը առաջին տպագրության հիշատակարանում սկսվում է նոր պարբերությունից և մեծատառով, իսկ տարբերակում՝ շարունակվում է նույն տողից և՛



Նկար 4

Աստվածաշնչի առաջին տպագրության վերջին էջը

փոքրատառով, քանի որ փոխվել է նաև նախորդ «բարեաց» բառի կետադրական նշանը՝ վերջակետը փոխարինվել է միջակետով: Աջ սյունակի 16-րդ տողի «եռեանցի» բառի մեծ դարձել է ի («եռեանցի»), և այլև (տե՛ս՝ նկ. 3—4):

Հիշատակարանի այս և նման աննշան տարբերությունները մեր կարծիքով առաջացել են խմբագրման հետևանքով: Հավանաբար Ոսկան Երևանցին, երկրորդ տարբերակը տպագրության պատրաստելիս, մեկ անգամ ևս կարդացել է հիշատակարանը, նկատել այս փոքրիկ սխալները, (որոնք առաջացել են կետադրության նշանները ոչ ճիշտ օգտագործելուց), և ուղղելով դրանք, հիշատակարանը (կամ նրա մի մասը) շարել է նորից: Հնարավոր է նաև, որ երբ Ոսկանը Աստվածաշնչի շարվածքը՝ չի քանդել, այլ պահել է երկրորդ անգամ տպագրելու համար, նրա հիշատակարանի որոշ տառեր կամ բառեր թափվել են, որոնց վերականգնումից էլ առաջացել են տարբերակի հիշատակարանի այդ աննշան տարբերությունները:

Այսպիսով, Ոսկան Երևանցին 1666—68 թվականներին և տպագրել է Աստվածաշնչի երկու տարբերակ, որոնցից մեկը հարադատ

էր հայկական եկեղեցու կանոններին և Ոսկանին զերծ պիտի պահէր «լատինամուկ» կոչվելու վտանգից:

Սեր կարծիքով այդ տարբերակը Ոսկան Երևանցին տպագրել էր լատին գրաքննիչներից գաղտնի՝ Հայաստան ուղարկելու նպատակով: Բայց, ցավոք սրտի, նրան հավանաբար չի հաջողվել իրականացնել իր այդ նվիրական երազանքը: Այդպես ենք մտածում, որովհետև Աստվածաշնչի այդ երկրորդ տարբերակից մեր երկար որոնումների ընթացքում Սովետական Միությունում չհանդիպեցինք և ոչ մի օրինակի¹¹: Հավանական է, որ այդ բանում Ոսկան Երևանցուն խանգարել են քաղաքական ու տնտեսական մի շարք խոչընդոտներ, որոնք ծառացած էին բազմերախտ տպագրիչի առջև: Կամ գուցե Աստվածաշնչի այդ տարբերակները ջրասույզ են եղել Ոսկանյան այլ հրատարակությունների հետ, որոնք ուղևորվում էին Հայաստան վաճառքի համար: Կամ գուցե բռնագրավվել և ոչնչացվել են լատին կղերականների կողմից: Իհարկե սրանք դեռևս ենթադրություններ են, և մենք առայժմ հավաստի ոչինչ ասել չենք կարող մինչև չպարզվեն մեզ հետաքրքրող որոշ լրացուցիչ հարցեր:

Առայժմ հավաստի միայն այն է, որ Ոսկան Երևանցին տպագրել է Աստվածաշնչի երկու տարբերակ, որոնցից Զ. Պատկյանի մոտ պահվող օրինակը, մեզ հայտնի, դեռևս

¹¹ Որպեսզի հնարավոր լինի հավաստիանալ մեր ենթադրության մեջ, խնդրում ենք բոլոր նրանց, ովքեր կհանդիպեն Աստվածաշնչի այս տարբերակին, հայտնեն հետևյալ հասցեով. Երևան, Տերյան 72. Հանրապետական գրադարան, հայ գրքի մատենագիտության բաժին:

միակ դիրքն է, որ տպագրվել է հայ եկեղեցու կանոններին հարադատ¹²:

Այս հանգամանքը մեկ անգամ ևս ընդգծելով Ոսկան Երևանցու արժանիքները, բոլորովին էլ չի նշանակում, որ եթե չլիներ այս տարբերակը, մենք այսօր նրան պետք է մեղադրեինք «լատինամուկության» մեջ:

Մեծ է հայ տպագրության երախտավորներ Ոսկան Երևանցու և նրա ընկերների՝ Մատթեոս Ծարեցու, Կարապետ Անդրիանացու և Ավետիս Ղլիճենցի անձնվեր աշխատանքի նշանակությունը:

Նրանք ոչ միայն տպագիր Աստվածաշունչ պարզեցին հայերին, այլ նաև գիտական այնպիսի գրքեր տպագրեցին, ինչպիսիք են պատմաերկրբ, քերականության ու ընթերցանության գրքերը:

Մատթեոս Ծարեցու, Ոսկան Երևանցու անձնագործ աշխատանքը պսակվեց մ' ժ հաղթանակով՝ հայ ժողովրդի հարատևությանը: Այսօր մեր մանուկների թոթովախոս հայերենը լսելով, ամեն մի հայ երախտիքով է հիշում մեր ժողովրդի մշակներին՝ Մաշտոցին, Սահակ Պարթևին, Խորենացուն, Նարեկացուն և նրանց հետ մեկտեղ նաև Մատթեոս Ծարեցուն ու Ոսկան Երևանցուն, որոնք իրենց կյանքի գնով գիրքը դարձրին հայ ժողովրդի սեփականությունը:

¹² Ավետիք չենք համարում նշել, որ այդ օրինակի անվանաթերթի վրա պարզ ձևագրով մակագրված է «չիշատակ է ի դուռն սուրբ յակորայ Երուսաղեմ»:

Որից իմանում ենք. որ գիրքը Ամստերդամից ինչ-ինչ ճանապարհներով հասել է Երուսաղեմ, իսկ այնտեղից էլ, ո՞վ իմանա, ինչպիսի՞ թափառումներից հետո հանգրվան է գտել նյու-յորքաբնակ Զ. Պատկյանի գրադարանում, որը մեծահոգաբար, չի զլացել մեզ տեղեկացնել այդ տարբերակի մասին:

